22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1994 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 245 (748)

Ազգ
Azg
armenian daily

Ղարաբաղում հաստատվեց նախագահական համակարգ

Դեկտեմբերի 21-ին ԼՂՀ առաջին գումարման Գեր. առաջին նստաշրջանը վերսկսեց աշխատանքը: Ինչպես նախատեսվում էր, առանցքային հարցը, որը խորհրդարանի խոսնակ Կարեն Բաբուրյանի և մի խումբ պատգամավորների առաջարկությամբ ներկայացվել է ժողովուս գամավորների քննարկմանը, Լեռնային Ղարաբաղի կառավարման կառուցվածքների վերակազմավորումն էր: Ելույթ ունեցողները ընդգծեցին այն միտքը, որ հանրապետության մի շարք մարմիններ, մասնավորապես Պաշտպանության պետական կոմիտեն, այլևս չեն համապատասխանում ստեղծված իրավիճակի պահանջներին: Ընդգծվել է նաև, որ ավելի քան 2 տարի ԼՂՀ-ն պաշտոնավարների հանրապետություն է, ինչը ժողովրդական ընտրողների կարծիքով անընդունելի է պատերազմական պայմանների պատճառով: Սահմանադրական ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ այսօր անհրաժեշտ են արմատական փոփոխություններ և առաջարկեց Լեռնային Ղարաբաղում մտցնել նախագահության ինստիտուտ և անցնել նախագահական կառավարման:

Տես # էջ 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Դեմոկրատիան պաշտպանել սասանողի հարվածներից

[illegible]

ՀԱՅԱՍՏԱՆ

Քաղաքական ճգնաժամը խորանում է. կուսակցությունները հավակնում են ճայլերը

Հայոց խորհրդարանը քայքայման եզրի՞ն

ՀՅԴ-ն, «Ազգային առաջադիմություն» և «Ազատ խորհրդարանականները» նույնպես դադարեցրին աշխատանքը

ԱՐԱՄ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

[illegible]

Տես # էջ 2

«Հայէներգո». Ներկա սակագները չեն նպաստում էլեկտրաէներգիայի արտադրության աճին

[illegible]

ԱՇԽԱՐՀ

Հունաստանը դեմ է Թուրքիայի և Եվրամիության մաքս դաշինքին

[illegible]

Ռուսաստանն ընդհատեց օդային և ցամաքային հաղորդակցությունն Ադրբեջանի ու Վրաստանի հետ

[illegible]

Տես # էջ 3

[illegible]

ԱՊՀ դեսպանների հանդիպումը հետաձգվեց մինչև հունվարի կեսերը

ՄՈՍԿՎԱ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԼՈՅՅԱՆ ՏԵՐՅԱՆ: [illegible]

Ցավակցություն

[illegible]

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ ՏԵՂԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ղարաբաղում հաստատվեց նախագահական համակարգ

Սկիզբը էջ 1

Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի գլխավոր հրամանատար, գեներալ մայոր Սամվել Բաբայանն իր ելույթներում հատկապես կարեւորեց հանրապետության վարչապետի ընտրության հարցը, նշելով, որ իշխանության ճյուղերի գործունեության սահմանազատումը օրվա հրատապ պահանջն է, եւ բանակը առայժմ փաստորեն կատարում էր գործադիր իշխանության ֆունկցիաների մի մասը: Նախագահական կառավարման օգտին հանդես եկան նաեւ մի շարք այլ պատգամավորներ, այդ թվում նաեւ արտաքին գործոց նախարար Արկադի Ղուկասյանը:

Բուռն քննարկումներից հետո ղարաբաղյան խորհրդարանն ընդունեց ԼՂՀ-ում նախագահական կառավարում մտցնելու մասին որոշումը: Այնուհետեւ պատգամավորները ծանոթացան ԼՂՀ նախագահի մասին օրենքի նախագծին, որը քննարկվեց հոդված առ հոդված: Օրվա 2-րդ կեսին խորհրդարանն ընդունեց 11 կետից բաղկացած «Լեռնային Ղարաբաղի նախագահի մասին» օրենքը, որտեղ նշված է, որ ԼՂՀ նախագահ կարող է դառնալ 35 տարին լրացած Լեռնային Ղարաբաղի յուրաքանչյուր քաղաքացի, որն ապրում է հանրապետությունում վերջին 10 տարիներին:

Օրենքում նշված է նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի նախագահն ընտրվում է 5 տարի ժամկետով, պատգամավորների ձայների մեծամասնությամբ կամ 50+1 սկզբունքով, իսկ պաշտոնանկ է արվում պատգամավորների ձայների 2/3-ով: Ընդունված օրենքում կան բավականին հետաքրքիր դրույթներ, առանձնահատուկը սակայն այն է, որ ԼՂՀ նախագահը իրավունք չունի անդամակցել որեւէ հասարակական-քաղաքական կազմակերպության:

Դեկտեմբերի 22-ին նախատեսվում են ԼՂՀ նախագահի եւ վարչապետի ընտրություններ: Մի շարք պատգամավորների կարծիքով, ընտրությունների ձախողման դեպքում խորհրդարանը մտել է փակուղու մեջ, որից հետո հանրապետության նոր խորհրդարան:

■ *Դադարեցվել է Արարատի ավազի կարգման ֆաբրիկայի գործունեությունը: ՀՀ արդյունաբերության նախարար Ուսե Մախարյանի հրամանով 1994 թ. դեկտեմբերի 1-ից ժամանակավորապես դադարեցվել են Արարատի ավազի կարգման ֆաբրիկայի աշխատանքները: Նախարարի հրամանը ընդունված է հետաքրքրված այս ժամանակավոր դադարի ընթացքում իրականացնել ֆաբրիկայի վերանորոգման աշխատանքները: Առանձին աշխատանքներ կկրեն հիմնական բնույթ:* ՓԱՍՏ

Սկիզբը էջ 1

Երբ դահլիճում որեւէ սատարկություն չլիներ, կարելի էր եւ այդ հարցերի շուրջ կենարկություն չկատարել, սակայն սատարկությամբ հանդես եկավ Գեւ նախագահ Բաբկեն Արարքցյանը, իսկ դրան հաջորդած քննարկությունները չկայացան ներումի բացակայության պատճառով: Եղայր անձնապես ՀՀՇ պատ. ընդդիմությունից հետո «ամեն ինչ իր տեղն ընկավ», պատգամավոր Արշակ Սադոյանը Բաբկեն Արարքցյանին հայտարարեց, թե նա «անձնական պատասխանատվություն է կրելու քաղաքացիական պատերազմի համար», եւ կրկին խնդրեց, որ նիստը վարի Արտաշես Թումանյանը: Ընդհանուր առմամբ, երեկվա նիստն աչքի էր ընկնում միմյանց նկատ...

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայոց խորհրդարանը քայքայման եզրի՞ն

ՀՅԴ-ն, «Ազգային ինքնորոշումը» եւ «Ազատ խորհրդարանականները» նույնպես դադարեցրին աշխատանքը

գամավորական խմբակցության անունից Էդուարդ Եգորյանն առաջարկեց մի հարց. ո՞ւմ էր ձեռնտու այս ամբողջ աղմուկը (ակնարկը բացահայտ էր՝ վերագրվում էր ընդդիմությանը): Ալբերտ Բաղդասարյանը նույնպես փորձեց երկար ունենալ, սակայն դա նրան նույն դահլին չհաջողվեց:

Եղայր անձնապես ՀՅԴ պատգամավորական խմբակցության անունից Սեյրան Բաղդասարյանը հայտարարեց, թե իրենց պատգամավորական խմբակցությունը դադարեցնում է աշխատանքը: Այս մասին ավելի մանրամասն կխոսենք մի այսօր կայանալիք մամուլի ասուլիսում: Իր հերթին Ալբերտ Բաղդասարյանը հայտարարեց, թե «Ազգային ինքնորոշում» կազմակերպության պատգամավորները նույնպես այսուհետեւ չեն մասնակցի խորհրդարանի աշխատանքներին առաջ քաշելով երկու պահանջ՝ խորհրդարանի եւ նրա նախագահ Բաբկեն Արարքցյանի ինքնահրաժարականը: «Ազատ խորհրդարանականներ» պատգամավորական խմբի անունից Պարույր Հայրիկյանը հայտարարեց, թե իրենց խումբը եւս չի մասնակցի խորհրդարանի աշխատանքներին: Որո՞նք էին բոյկոտման հիմնական դրդապատճառները: Նախ, նիստը հնարավոր չեղավ քաղաքային ռադիոյի ցանցով (հեռուստաբացակայության դրդապատճառներով, երբ նիստը «պաշտոնապես» փակվում էր, հեռարձակումը դադարում էր), երկրորդ՝ նիստը վարի ոչ թե Բաբկեն Արարքցյանը, այլ Արտաշես Թումանյանը: Իսկ այն բանից հետո, երբ խորհրդարանի նախագահը, տեղակալները եւ հերթապահ հեռացան իրենց տեղերից նիստում չկար, նիստը տարածայնորեն շարունակվեց Պարույր Հայրիկյանի նախագահությամբ (պաշտոնապես դա խորհրդակցություն էր): Իսկ երբ

մասը նոր մեկնաբանություններով, որոնք հանգեցին վերածվում էին անձնական վիրավորանքների, եւ դա, ինչպես նաեւ շփոթված մթնոլորտը, պատկառելի էին օգտակար գործունեության գործակիցը:

Առավել հետաքրքիր էր ԱԱՊԿ-ի պաշտոնական ներկայացուցիչ Դավիթ Շահնազարյանի ելույթը, որը նշեց, թե հանրապետությունում իրավիճակն ինչպես լարված է, եւ հիմա լարվածության կենտրոնը խորհրդարանն է: Նա հայտարարեց նաեւ, թե պաշտոնյա Համբարձում Գալստյանի սպանությունն է ավելացնելով, թե քաղաքական սպանությունների եւ սպանության դեպքեր հանրապետությունում կատարվել են: Այնուհետեւ նա, որպես ԱԱՊԿ-ի ղեկավար, հայտնի դարձրեց, թե Համբարձում Գալստյանի սպանությունը բացահայտվել է, մանրամասն ավելացնելով, թե այն, ինչ կատարվում է խորհրդարանում, չի նպաստում սպանության բացահայտմանը:

Իսկ երեկոյան, երբ նիստում կրկին չկար, եւ դահլիճում մնացել էին 40 պատգամավորներ խորհրդակցում էին Պարույր Հայրիկյանի նախագահությամբ, համաձայնություն ձեռք բերվեց, որ ընդունված որոշումների տակ իրենց ստորագրությունը կդնեն այն պատգամավորները, որոնք համաձայն են դրանց հետ, եւ հետագայում է, որ դրանք ուղարկեն Գեւ որոշումների մեջ:

Ի՞նչ է սա, խորհրդարանական անհնարին ճգնաժա՞մ, թե պարզապես նախընտրական պայքարի մեկնարկ է իր բարձրակետին: Համենայն դեպս, պարզ է մի բան. եթե 40 պատգամավորներ վայր դնեն իրենց լիազորությունները, ապա խորհրդարանը սեփականորեն կլինի ինքնալուծարված ձայնեաբանակյան սալ: Ընդ որում առանց հայացնելու ընտրությունների մասին նոր օրենք ընդունելը:

ԲԸՆԴԵՐՔ

Հայաստանի նավթի եւ գազի պաշարները կարող են մրցել Հյուսիսային Ալյասկայի պաշարների հետ

Հայաստանից մի պատվիրակություն է մեկնել Կալիֆորնիա՝ քննարկելու տեղական պաշարների արդյունահանման հարցը: Ամերիկյան փորձագետների կարծիքով, Հայաստանի նավթի պաշարները երկրի էներգիայի կարող են անկախ դարձնել: Հայաստանի նավթի եւ գազի պաշարները կարող են մրցել Հյուսիսային Ալյասկայի պաշարների հետ, որը կազմում է մոտ 6 մլրդ. տակառ նավթ եւ 175 մլրդ. խոր բնական գազ: Համաձայն «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի դեկտեմբերի 20-ի հաղորդման, ամերիկացի մի նավթախույզ, երկրաբան, 3 անգամ եղել է Հայաստանում եւ այս շաբաթ ներկայացրել է իր փաստերը Լոս Անջելեսում գտնվող Կալիֆորնիայի էներգիայի հանձնաժողովին: «Պաշարները շատ են, մենք իսկ տեղեկություններ ունենք, սակայն մինչեւ այժմ տեղական մասնագետների կատարած փայլուն աշխատանքը ցույց է տալիս, որ կան անհրաժեշտ ծախսեր, եւ խնդիրը գիտության ու տեխնիկայի կիրառումն է», ասում է այդ մասնագետը: Ավելի քան 3 տարի առաջ ոչ պաշտոնական նախնական բանակցություններ էին սկսվել Կալիֆորնիայի տեսական հողերի պահպանման հանձնաժողովի գլխավոր ինժեներ Մարինա Ոսկանյանի կողմից: 1991 թ. հետո Վրաստանի եւ Ադրբեջանի տարածով անցնող Հայաստանի գազամատակարարումը ընդհատվել է: Հայաստանի էներգետիկայի եւ վառելանյութի նախարարի տեղակալ Կ. Գալստյանը, որը գլխավորում է պատվիրակությունը, հանդիպումներ է ունեցել Կալիֆորնիայի ընկերությունների հետ եւ էներգիայի տեսական զեկուցումներում: Նա ասաց. «Մեզ համար շատ նշանակալից է անկախ էներգետիկ ռեսուրսների ուսումնասիրումը եւ զարգացումը: Մենք համոզված ենք, որ մեր տարածով անցնեն նաեւ շարքեր տրանզիտային վառելիքի տեղափոխման ուղիներ եւ դրան նպաստում է Լիսաբոնում ստորագրված եվրոպական էներգետիկ խարտիայի փաստաթուղթը, որին միացել է նաեւ Հայաստանը: Դա շատ կարեւոր նշանակություն կունենա Հայաստանի համար՝ հետագայում զարգացնելու հարաբերությունները շարքեր երկրների հետ էներգետիկայի բնագավառում»: Կ. Գալստյանը վերադառնում է Երեւան բերելով փոխհասկացողության հուշագիր տեղական նավթի ու գազի պաշարների զարգացման հարցում աջակցության վերաբերյալ: Գալստյանը եւ իր պատվիրակությունը Կալիֆորնիայում փնտրում են փորձարարական նախագծեր, ներառյալ արեւի, երկրի ջերմության եւ քամու էներգիայի, որոնք կարող են օգնել Հայաստանին հոգալու էներգետիկ կարիքները: ՆՏ

ԱՍՈՒԼԻՍ

«Խաղաղության գնդի» կամավորները սիրով են ծառայում Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: «Հայ անկախ լրատվական կենտրոնի նախաձեռնությամբ դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ ամերիկյան «Խաղաղության գնդի» կազմակերպության նախագահ Ռոբերտ Մակֆլինգոնի մամուլի ասուլիսը երկամյա գործունեությունից հետո Հայաստանը թողնելու առթիվ: Պարոն Մակֆլինգոնը լրագրողներին ներկայացրեց «Խաղաղության գնդի» գործունեությունը, նրա իրագործած ծրագրերը Հայաստանում, որոնցից մեկը վերաբերում է կազմակերպության ծավալած կրթական գործունեությանը: Գնդի կամավորների շնորհիվ հանրապետության տարբեր շրջաններում շուրջ 3500 բարձր դասարանցիներ անգլերեն են սովորել: Լեզվի ուսուցումը լիովին դառնալու նպատակով իրականացվել են մի շարք այլ մշակութային միջոցառումներ: Կազմակերպությունը Հայաստանում ստեղծել է նաեւ «Հայ է-Ֆեմ» անկախ ձայնասփյուռը: Ուսխանոցների երկրորդ ողջերթությունը բնական տաղանդն է, որում ընդգրկվել են 900 մանր ձեռնարկատերեր:

Պրն. Մակֆլինգոնը լրագրողների խնդրանքով բացատրություններ տվեց «Խաղաղության գնդի» կազմակերպության մասին: Տեղեկացվեց, որ այն ստեղծվել է 60-ական թվականների սկզբին Ամերիկայի նախագահ Ջոն Քենեդիի հրամանով: Կազմակերպության մեջ ընդգրկվող կամավորները երկամյա պարտադիր ծառայությունն են անցնում աշխարհի մոտ դառնալ մանրմասնում գտնվող երկրներում: Կազմակերպության ստեղծման նպատակն է ամերիկացի երիտասարդներին բանակային ծառայության փոխարեն ակնկալելու այլընտրանքային տարբերակ առաջարկել: Նրանք գնալ շատերը սիրով են համաձայնում մեկնել օտար երկրներ այլ ժողովուրդների հետ շփվելու, նրանց մշակույթին ծանոթանալու նպատակով, նաեւ որ, իրենց իսկ խոստմամբ, Ամերիկան մեկուսացած երկիր է: Կազմակերպության նախագահը ավելացրեց, որ աշխարհի 150 երկրում մինչեւ օրս ծառայել են 300 հազար կամավորներ, որոնցից 40-ը՝ Հայաստանում: Անոնք Հայաստանում կմնան եւս 25 հոգի:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Հայանտառը» կանգնած է կործանման եզրին

ԵՐԵՎԱՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: «Հայանտառ» արտադրական միավորման փոխտնօրեն Վոլոդյա Ղարիբյանի կարծիքով միավորումը հայտնվել է խորը ծանր կացության մեջ: Միավորման կողմից իրականացվող բոլոր աշխատանքներն թույլ պաստանի կատարելու համար անհրաժեշտ է տարեկան 400 միլիոն դրամ: Մինչդեռ 95 թ. համար կառավարությունը միավորմանն է հատկացրել ընդամենը 142 միլիոն դրամ, երբ միայն աղմնան ծախսերը կազմում են 10,6 միլիոն դրամ, որը միավորումը պարտք է վճարի ամսեկանորեն: Վ. Ղարիբյանի կարծիքով, կառավարության հատկացրած գումարը կբավականացնի միայն վարչական անձնակազմը պահելու համար: Միավորման Նոյեմբերյանի, Վայքի, Ստեփանավանի, Կալինինոյի եւ Եղեգնաձորի անտառտնտեսություններն աշխատում են վնասով եւ սեփական բյուջեից են օգնում: Վ. Ղարիբյանը համոզված է, որ երբ կառավարությունը չհիմնավորի իր որոշումը, ապա «Հայանտառ» միավորումը պարզապես սնանկված կլինի դադարեցնել իր աշխատանքները: Դա այն դեպքում, երբ միավորման առաջ է ծառացած ոչնչացված անտառային տարածքների վերականգնումը:

■ *S.Atkins ընկերությունը Հայաստանում մի շարք ամփոփներ իր գործունեության ընթացքում հասցրել է լուրջ աշխատանքներ կատարել էներգախնայողության ասպարեզում: Ընկերությունը ներկայացրել է մի ծրագիր, որ հնարավորություն է տալիս մեծ չափով խնայել էներգիայի պաշարները խոշոր գործարաններում: Այդ ծրագրով արդեն կիրառվել է զարերի գործարանում եւ զգալի արդյունքներ է տվել: Նման ծրագիր է սկսվել Սփյուռքի այդ համերում, իսկ հետագայում կիրառվեն նաեւ Արարատի ցեմենտի գործարանում, «Լույս» արտադրական միավորումում եւ «Հայէլեկտրո» գործարանում:* ՓԱՍՏ

ԻՐԱՎԱԿԱՆ

Հանցանքների թիվը կրճատվել է 27 տոկոսով

ԵՐԵՎԱՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐԲ. 1994 թ. հունվար-նոյեմբերին Հայաստանի ՆԳՆ մարմինները գրանցել են 8263 հանցագործություն, որը 27 տոկոսով պակաս է անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Ինչպես հայտնեցին ՀՀ ՊԵՏ ՀԳ մեպիսիճակարչությունում, հունվար-նոյեմբերին ծանր հանցագործությունների թիվը նվազել է 1,8 անգամ: Անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ հանցագործությունների ընդհանուր թվի մեջ դրանց բաժինը 37,1-ից իջել է 27,9 տոկոսի: Հանցագործությունների մեջ առավել մեծ բաժին են կազմում (27,8 տոկոս) գողությունները, ըստ որում, դրանց 65,4 տոկոսը կազմում են քաղաքացիների անձնական ունեցվածքի հափշտակումները: Նշված ժամանակահատվածում Հայաստանում արձանագրվել են 95 կողոպուտ, 126 ելուզակային հարձակում, 180 կանխամտածված սպանություն, 117 մարմնական ծանր վնասվածք, 21 բռնաբարություն, խուլիգանության 214, խարդախության 226 դեպք:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փոքրամասնությունները Բուլղարիայում եւ Թուրքիայում

ԵՐԵՎԱՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: ՆԱՏՕ-ի կողմից վերջերս վիճակագրական ուսումնասիրությունները փորձում են լույս սփռել մի շարք երկրներում ազգային փոքրամասնությունների վրա: Դրանք կատարված են գլխավորապես նպաստ ունենալով ճշտելու այդ երկրներում մամեղականների ներկայության եւ աշխուժության չափը: Հատկանշական է, որ ուսումնասիրության մեջ Արգենտինայի հունական փոքրամասնությունը ներկայացված է 13,3 տոկոս, իսկ քրդերի ներկայությունը Թուրքիայում 14 տոկոս, այլ ոչ թե 7, ինչպես միջտմտական կերպով ազդում են ներկայացնել թուրքերը: Բուլղարիայում օտարների ներկայությունը այսպիսին է. մակեդոնացիներ 2,5 տոկոս, գնչուներ 2,6 տոկոս, թուրքեր 8,5 տոկոս, հույներ 0,3 տոկոս, ռուսներ 0,2 տոկոս, այլ ազգություններ 0,6 տոկոս: Թուրքիայում, քրդերից բացի, արաբները կազմում են 1,7 տոկոս, իսկ 1,3 տոկոսի սահմաններում ներառված են հայերը, հույները, չերքեզները, չեչենները, լազերը, վրացիներն ու հրեաները:

ԼԻԲԵՐԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Դ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562941, AT&T (7 8852) 151065
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՅՈՒԼԻԱ ԳՈՒԱՐԳԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562883
A STYLE համակարգչային ձեւավորում / 581841
Apple Macintosh համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՀՐՋԱՑ ԱՊՀ

Սկիզբը էջ 1

Ջրաժամանակ հաղորդվում է, որ ռազմական օբյեկտների ամբանառումը չեչենական մայրաքաղաքում խուճապ է հարուցել, ինչը հետում է Ինչկիայի ղեկավարությունը: Այն միաժամանակ հաղորդում է, որ գիշերային ամբակոծությունների հետևանքով Գրոզնում 120 մարդ զոհվել է: Դուդաևին հավատարիմ զորամիավորումների մի մասը սկսել է դուրս գալ Գրոզնի կենտրոնից դիրքեր զբաղեցնելով մերձակա լեռներում, որ ստեղծվում են պարտիզանական ջոկատներ: Ռուս չեչենական բնդհարված բանակցություններում ռուսական կողմի ղեկավար Չերնոմիրդինը հայտարարել է, որ չնայած ամեն ինչին, միևնույն հետաքրքրություն է մնում վերսկսելու բանակցությունները: Երեկ կայացած մամուլոասուլիսում նա հայտարարել է նաև, որ ռուսաստանյան ուժային նախարարների գործողությունները տարածաշրջանում համաձայնեցված չեն եղել դիվանագետների ճեռնարկած քայլերի հետ:

Ռուսաստանի հակահետախուզության դաշնային ծառայության ղեկ Սերգեյ Ստեպաշինի կարծիքով, Դուդաևն արդեն որևէ բանակցության չի գնա: Նա խիստ մտահոգություն է հայտնել հսկայական զոհերի մասին՝ մեծապես վարձկանների առկայության պատճառով: Ըստ Ստեպաշինի, նրանք այսօր են եկել ոչ այնքան հարուստ հյուսիսկովկասյան հանրապետություններից, որքան նախ և առաջ Աֆղանստանից ու Ադրբեջանից: Հավանաբար հենց այս հանգամանքն էլ հավի առնելով ՌԴ նախագահ Բորիս Ելցինը երեկ հրամանագիր է ստորագրել, որով վերացվում է հաղորդակցությունը Ադրբեջանի և Վրաստանի հետ: Ըստ այդ հրամանագրի, արգելվում է այս պետությունների քաղաքացիների մուտքը Ռուսաստան, նույնկես տարանցիկ ուղերթի նպատակով:

Երեկ սկսվել է նաև «Խաղաղության ակցիան», որ նախաձեռնողների ծրագրով պետք է կնշանակի երբա անցկացնի Ռոստով-Բաքու ավտոմայրուղու ողջ երկայնքով: Ըստ առկա տեղեկատվության, այս երթում ընդգրկված են հիմնականում երեխաներ:

ՌԴ կառավարության ժամանակավոր մամլո կենտրոնի տվյալներով, երեկ Չեչնիայի օդում խոփվել է ռմբակոծիչների 4 թռիչք: Հողատեղծների մարման վիրածներ են արվում: Փորձերում ողջ Դուդաևի վարչակարգի ուժի ցուցադրության տեղադրված տանկերը, զրահամեքենաները ու հրանոթները խոչընդոտ են դարձել հրդեհների մարման գործում: Հետախուզական խմբերի գեկուցագրերի համաձայն, հաղաի իրադրությունը անվերահսկելի է»:

Երեկ ժամանակավոր լրատվական կենտրոնը հաղորդեց, որ Ալավլյանովսկայա-Չեռվլյոնայա բնակավայրերի շրջանում ճանապարհը ջարդված են: Հողատեղծների մարման վիրածներ են արվում: Փորձերում ողջ Դուդաևի վարչակարգի ուժի ցուցադրության տեղադրված տանկերը, զրահամեքենաները ու հրանոթները խոչընդոտ են դարձել հրդեհների մարման գործում: Հետախուզական խմբերի գեկուցագրերի համաձայն, հաղաի իրադրությունը անվերահսկելի է»:

ԿՈՎԿԱՍ

Գրոզնին ռմբակոծվում է. Դադարեցվեց ՌԴ հաղորդակցությունը Վրաստանի եւ Ադրբեջանի հետ

Ռուսական զորքերը գրավեն Գրոզնին, որտեղ նախագահական պահեստազորը կծավալվի Ռուսաստանի ամբողջ տարածում», գտնում է Անատոլի Լուկիանովը:

«ՓԱՍՏ», ՌԻԱ ՍՆԱՐՔ

ԿԻԵՎ

Ավարտվում է ռուս-ուկրաինական պայմանագրի մշակումը

ԿԻԵՎ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ՍՐՄՆՆՊՐԵՍ: Այսօր այստեղ ավարտվում է Ուկրաինայի եւ Ռուսաստանի բարեկամության ու համագործակցության լայնընդգրկուն ընդհանուր հարաբերական պայմանագրի լրամշակման բանակցությունների վերջին փուլը: Պետվարակությունների ղեկավարները Ռուսաստանի ԱԳՆ հատուկ հանձնարարությունների դեսպան Յուրի Դուբինինը եւ Ուկրաինայի առաջին փոխվարչապետ Եւգենի Մարչուկը լրագրողներին հայտնեցին, որ բանակցությունների ավարտից հետո կստորագրվի պայմանագրերի գնկուցագիր, որտեղ երկու երկրների նախագահներին կհաղորդվի ստորագրվելիք փաստաթղթերի վիճակի մասին: Ինչպես հայտնի դարձավ Ուկրինֆորմի բղրակցին, դեռեւս չլուծված են մնում կրկնակի հարկաճշտության հարցը եւ տարած բային անվտանգության երաշխիքների ձեւակերպումները: Եւգենի Մարչուկի խոսքերով, վերջին 5 ամսում երկու երկրները կարողացել են պատրաստել երկկողմ հարաբերությունները առնչվող 15 տարբեր փաստաթղթեր:

ՀԱՄԱՌՈՏ

Ահաբեկչություն Մոսկվայի «Ռակուրս» ռադիոկայանում

ՄՈՍԿՎԱ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ-ԻՄՍ-ՊՐԵՍ: Երեկ, ժամը 22-ին մոսկովյան «Ռակուրս» ռադիոկայանի շենքում հուժկու պայթյուն լսվեց: Ինչպես հայտնեց ռադիոկայանի հաղորդավար Ալեքսանդր Մինաեւը, որը «Ձայն առաջ» ռադիոկայանի աշխատակազմի ղեկավարն է, պայթյունի ալիքը ջարդել է դուռը եւ աղակիները, նա ինքն անձնական վնասվածքներ է ստացել: Տվյալ ահաբեկչական հարձակման ծառները եւ հեղինակները դեռեւս անհայտ են:

Գորշակով. «Ռուսական մաֆիային առնչվող լուրերը մեծագին են»

ՄՈՍԿՎԱ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ: Արտաքին հետախուզական ծառայության ղեկավար Վյաչեսլավ Տրուբնիկովը մամուլի ասուլիսում «ռուսական մաֆիայի» գործունեությանը տրվող գնահատականները չափազանցված են եւ փաստերով չեն հաստատվում, գտնում է Ռուսաստանի ՆԳՆ միջազգային կապերի վարչության պետ Վալերի Գորշակովը, որը երեկ Պետդումայում ելույթ ունեցավ կենտրոնական եւ Արեւելյան Եւրոպայի երկրների հետ Ռուսաստանի հարաբերություններին նվիրված նիստում: Նա մեջբերեց Լեհաստանի իրավապահ մարմինների տվյալները, որոնցում «ռուսների» հանցագործությունների բաժինը հատկապես մեծ է, եւ որոնց համաձայն այս տարվա հունվար-հոկտեմբերին ռուսաստանցիները Լեհաստանում կատարել են օտարերկրացիների գործած բոլոր հանցագործությունների միայն 14 տոկոսը: «Այսուհանդերձ այդ ցուցանիշն զգալիորեն ցածր է, ինչը թույլ է տալիս պնդել, որ «ռուսական մաֆիայի» թեման մեծագին բնույթ ունի», հայտարարեց ՆԳՆ ներկայացուցիչը:

Սոչիի բնակչուհին ահեց ԱՄՆ-ի հաղորդություն

ՍՈՉԻ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ-ԻՄՍ-ՊՐԵՍ: Բազմաթիվ ռուսաստանցիներ երեւի հիշում են գարնանը ԱՄՆ պետդեպարտամենտի նախաձեռնությամբ տարածված «վիճակախաղային այցագրի» տոմսերը: Հաղարկությանը մասնակցելու համար, որի մրցանակը ԱՄՆ-ում բնակվելու իրավունքն էր, պահանջվում էր միայն անդրօվկիանոս ուղարկել սեփական տվյալները: Սոչիի բժշկուհիներից մեկը, որն արդեն մոռացել էր այդ վիճակախաղի մասին, օրերս անսպասելիորեն Վաշինգտոնից նամակ ստացավ, որով իրեն, ամուսնուն եւ դստերը հրավիրում են ԱՄՆ-ի հաղորդություն ստանալու արդիվ:

ՔԻՇՆԵՎ

ՄԱՀ-ը Մոլդովային հատկացրեց 32 մլն. դոլար

ՔԻՇՆԵՎ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ: Միջազգային արժութային հիմնադրամը Մոլդովային հատկացրեց 32 մլն. դոլարի բնդհանուր վարկ: Երկուսքրի օրն ընդունված որոշման համաձայն 18 մլն անց ստացին վոխատուությունը հաստատության ներմուծման ծախսերի ծածկման համար: Ինչպես նշվում է հիմնադրամի հաղորդագրության մեջ, արտահանումից ստացվող գումարների կարիք ծագել է ամառային երաշտի հետեւանքով հացահատիկի բերքատվության զգալի նվազման պատճառով: Ինչ վերաբերում է հաստատությունում տնտեսական բարեփոխումների բնագավառին, հիմնադրամն նշել է, որ դրանք դարձյալ պետք է ամրապնդեն արդյունաբերական ակտիվների կարգավորման գործընթացը միջոցառումների միջոցով:

Անօթեան զինծառայողների մոտ 300 հազար ընտանիք Ռուսաստանում

ՄՈՍԿՎԱ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ: Անցյալ տարի պատերազմության նախարարության, ՆԳ նախարարության, հակահետախուզության դաշնակցային ծառայության, ռահվանառության զորքերի զինծառայողներին եւ նրա ընտանիքներին 74 հազար բնակարան է հատկացվել, նրանցից 281.5 հազար բնակարան: Գործարի խոսքերով, վիճակը հանգամանալուր լավ է Մոսկվայում, որի հարաբերաբար ադեն մի քանի տասնյակ զինվորական հիվանդանոցներ են իրականացնում զինծառայողների հատուկ բուժական կազմակերպությունների նոսնդում մասնագիտացված: Մոսկվայի կառավարությունն օգնում է նաև այն նախկին սպաներին, որոնք վճռել են գործարար դառնալ:

■ *Ռուսաստանում, առողջապահության դեպարտամենտի տվյալներով*, վերջին մի քանի օրերի ընթացքում գրանցվել են մեծ վնասներ ոչ միայն ճանապարհային վթարների ու ռումով, դրանք խորհրդ են նաև մարդկանց առողջությանը: Դեպարտամենտի տվյալների համաձայն, այդ օրերի բնթացքում Ռուսաստանում գրանցվել է 60 մարդ, որից 7-ը մահացել է:

ՓԱՍՏ

ՀԱՄԱՌՈՏ

Գիֆթերիայի համաճարակ Կրզըզստանում

ԲԻՇՔԵԿ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ՍՐՄՆՆՊՐԵՍ: Կիրգիզիայում սկսվել է դիֆթերիայի համաճարակ: Հանրապետության առողջապահության նախարարության տվյալների համաձայն, տարեկզրից հիվանդացել է 200 մարդ, որ որում հիվանդներից 8-ը մահացել է: Հանրապետությունում համաճարակ կանխելու համար իրավիճակի վատթարացման պատճառներից մեկը երեխաների պատվաստումների կրճատումն է: Բացի դրանից, ԽՍՀՄ փլուզումից հետո, խախտվել է հանրապետությանը պատվաստանյութերի առաքման համակարգը: Բացասական դեր են խաղացել բնակչության գաղթը, սեզոնային բանվորների հարաճուն թիվը եւ ասիական երկրներ կատարվող առեւտրական ուղեւորությունները: Բացի դրանից, պարզվել է, որ բազմաթիվ բժիշկներ դիֆթերիայի ախտորոշման փորձ չունեն:

Նիյազովը ընծաներ է բաշխում

ԱՇԳԱԲԱԴ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ-ԻՄՍ-ՊՐԵՍ: Արգենտինայի Միջազգային հարաբերությունների խորհրդի արտաքին հաղորդության հարցերի ոչ կառավարական խորհրդակցական մարմնի նախագահ Սուհիլը ընծա ստացավ Թուրմենեստանի ղեկավար Սաղիամուրադ Նիյազովից: Երկկողմ համագործակցության ամրապնդման գործում ներդրած մեծ ավանդի համար հանդի սավոր պայմաններում նրան հանձնվեց Թուրմենբաշիի դիմանկարը:

ԱՅՑԱԿՅՈՒՄ ԵՆ ՉԵՉՆԻԱՅԻՆ

Ադրբեջանցի «գորշ գայլերը» պահանջում են դադարեցնել չեչենների բնաջնջումը

ԲԱՔՈՒ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ-ԻՄՍ-ՊՐԵՍ: Ադրբեջանի «Գորշ գայլեր» կուսակցության նախագահ Իսկենդեր Համիլովը հանդես եկավ միջազգային հանրությանն ուղղված դիմումով, որով կոչ է անում բոլոր ջանքեր գործադրել չեչեն ժողովրդի ցեղասպանությունը կանգնեցնելու համար: Միայն Գրոզնիում ռուսական օդուժի ամբակոծումներից զոհվել է 1000-ից ավելի խաղաղ բնակիչ, նշվում է վավաստաթղթում: Իր հերթին, Ադրբեջանի արտաքին հարաբերությունների գծով պետքարտուղար Վաֆա Գուլուզադեն ասել է, որ Ռուսաստանը հաստատուն ու միջնորդի մեծ փորձ ունի եւ պատրաստ է գնել Չեչնիայի հակամարտության խաղաղ կարգավորման ուղիներ: Երեն դա տեղի չունեցավ, ասել է նա Բաքվի ռադիոյին տված հարցազրույցում, արդա մի ցավագին առիթազրում կլանավելի Ռուսաստանի հնդիանակությունը, քանի որ նա որոշ հաստատուն է հանդես գալիս այլ երկրներում, բայց ի վերակի չէ լուծել սեփական խնդիրները:

Տաջիկստանում իրենց ձեռով են օգնում եղբայր Դուդաեին

ՄՈՍԿՎԱ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՌԻԱ-ՌԱՐԻ: Ժամանակավոր լրատվական կենտրոնից երեկ ստացված հաղորդման համաձայն, Ադիգեսանի տարածքում Քոլայի խոշոր տանձանոցան ջոկատի տեղամասի դիմաց նկատվում է զինված գրոհային ինքնաթիռ: Նրանց թվաքանակն առնվազն հասել է 500-ի: Բնդհում է զինամթերք, այդ թվում ռեակտիվ արկեր ու ականներ:

Դաշնակցային տանձանոցան Ծառայությունում կարծում են, որ տանձանոցաղանների դեմ նախատեսվում է լայնածավալ զինված ձեռնարկում, որն ինչ որ ձեռով կապված է Չեչնիայի դեպքերի հետ: Այսպես, Տաջիկստանի Իսլամական վերածննդության շարժման զինված ուժերի հրամանատար Ռիզվան Սաղիրովը վերջերս հայտարարեց. «Մեր եղբայր Դուդաեին լուր կողմերից ճնշում են, ուստի մեզ ոչ ոքի չի լուծել սեփական խնդիրները:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Հոսանք

[illegible]

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աքսորում Արամ... սխալ դուռ կը զարնէ

[illegible]

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սարալանում բոհում. Ուսանողի մտորումներ

[illegible]

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ,
Ուսանող

ՏԵՍԱԿԵՏ

Կա՞ արդյոք մամուլի ազատություն Հայաստանում

Առաջին հայացքից միանշանակ պատասխան ենթադրող այս հարցը իրականում շատ բարդ է: Երբ հաշվի ենք առնում Հայաստանում բազմաթիվ ու բազմազան մամուլի առկայությունը և այն հանգամանքը, որ մամուլում կարելի է տպագրել ինչ ուզես՝ սկսած հանրապետության նախագահին հայհոյելուց, վերջացրած էրոտիկ անեկդոտներով ու անպարկեշտ լուսանկարներով, կարելի է կարծել, թե Հայաստանում մամուլի ազատությունը կայացել է: Եվ իսկապես ընդդիմության լրատվական միջոցները և իրենց հզորությամբ, և մասսայականությամբ չեն զիջում պաշտոնական միջոցնե-



րին, [illegible] գոյություն չունի, առ այսօր ոչ մի ծանրակշիռ թերթի գործունեությունը [illegible] կողմից չի կասեցվել քաղաքական պատճառներով: Այս փաստերը են բազրել են տալիս, թե «չորրորդ իշխանությունը» իր բարձրության վրա է՝ ազատ և անկախ:

Մինչդեռ իրականում խնդիրը շատ ավելի խորն է: Բանն այն է, որ մամուլը «չորրորդ իշխանություն» է նախ և առաջ այնքանով, որքանով ազդում է հասարակական կարծիքի ձևավորման վրա, և հետևաբար այնքանով, որքանով այդ հասարակական կարծիքն ընդհանրապես ինչ-որ նշանակություն ունի հանրապետության կյանքում: Իսկ այդ առումով վիճակն անմխիթարական է: Երբ խորհրդային տարիներին լրագրական մի հոդված կարող էր հասարակական իրարանցում առաջացնել՝ իշխանություններին ստիպելով հետ շարժվել, ներել, ստեղծել հանձնաժողովներ, համապատասխան եզրակացություններ անել, ինչն, ի դեպ, բարձրացնում էր մամուլի ոչ միայն հեղինակությունը, այլև պատասխանատվությունը, ապա ներկայումս կարելի է գրել ամեն ինչ՝ կոնկրետ մեղադրանքներ ուղղելով կոնկրետ անձանց, և... ոչինչ: Սա՞ է մամուլի ազատությունը: Առաջին հերթին սա նշանակում է, որ հանրապետությունում հասարակական կարծիքն այլևս բացարձակապես որևէ դեր չի խաղում: Դա իր հերթին նվազեցնում է մամուլի դերը, որի մասին այնքան սիրում են խոսել հիմա: Էլ չխոսենք այն մասին, որ նման հրապարակումները թեև չեն արգելվում, սակայն դրանից հետո կարող են ջարդվել [illegible], հրդեհվել համապատասխան «դյուրավառ» համակարգիչներ և այլն, և լրագրողներն ու լրագրերը բացարձակապես անպաշտպան են:

Մյուս կողմից, մամուլի մասին օրենքը լրագրողներին իրավունք է տալիս ընդամենը լրատվություն ստանալ (նույն կերպ օրենքը կարող է կոչել կարին բայց չալ կոչել կարել, հաց բուխին՝ հաց թխել), սակայն ցանկացած պաշտոնյա կարող է զանգահարել որևէ լրագրողին գրողի ծոցն ուղարկել, և լրագրողը ստիպված է կամ այդ մասին լռել՝ հաշվի առնելով պաշտոնյայի հնարավոր հիշաչարությունը, կամ գրել այդ մասին՝ նախապես հաշտված լինելով, որ իր գործը ոչ մի օգուտ էլ չի տալու: Եվ ընդհանրապես, ազատ մամուլն այն չէ, երբ ցանկացած կազմակերպության ազատորեն հնարավորություն է տրվում ունենալ սեփական լրատվական միջոցները: Դա փաստորեն նշանակում է մամուլի բնութագրմանը, իսկ բնութագրված մամուլը չի կարող ազատ լինել: Մյուս կողմից, տնտեսական վիճակն այնպիսին է, որ իսկապես անկախ լրատվական միջոցների համար շատ դժվար է գոյատևել: Եվ ստացվում է այնպես, որ ձևականորեն ազատ մամուլ գոյություն ունի, սակայն իրականում այն չկա: Իհարկե, կարելի է հարցը դնել [illegible] պետությունը պարտավոր է ոչ [illegible] մամուլ, այլ միայն դրա ստեղծման [illegible] հնարավորությունը տալ: Սակայն պետությունը պարտավոր է իր գործունեությամբ նպաստել ազատ մամուլի առողջացմանը՝ բեկում և պարզապես արձագանքելով առավել կարևոր հրապարակումներին: Պաշտոնական մամուլը, որն անկասկած ազատ չէ և պարտավոր էլ չէ այդպիսին լինել, զբաղվում է հիմնականում ընդդիմադիր մամուլը հակոծելով (ի դեպ, այդ հակոծումը փոխադարձ է), մինչդեռ բոլորովին այլ անելիքներ ունի:

Մամուլի ազատության խոչընդոտն է նաև այն հանգամանքը, որ գոյություն ունեն թեմաներ, որոնց վրա ընդհանրապես «տաբու» է դրված: Եվ այդ արգելքը պաշտոնական չէ: Պարզապես կան բնագավառներ, որոնք վտանգավոր են առողջության համար, և դրանց մասին լրագրողները հաճախ ռաժիոռեն լռում են: Նույն խնդիր է նաև «պաշտպանող մեսությունն են» փաստը, որը լրագրողներին ստիպում է հաճախ գիտակցաբար խեղաթյուրել ճշմարտությունը, թեև այդ մասին նրանք ոչ ոք չի խոսել: Եվ ստացվում է այնպես, որ մամուլի ազատությունը սահմանափակվում է միայն «առօրյայի լուսաբանումների» վերաբերյալ դատարկ մեղադրանքներով ու «առկա բաց բողոքների և բերումների» մասին բուլդոզերլի բացախոսությամբ: Իսկ անհասցե հայհոյանքները նվազեցնում են մամուլի հեղինակությունը, ինչը բումերանգի նման արդեն իսկ հարվածում է նույն մամուլին:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

[illegible]

Բաժանորդագրված գրքերը բաց են բոլոր օրերին, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10-ից 15-ը:

Մնացել են հետևյալ գրքերը.

1. Ա. Դյումա, 12 և 15 հատորները, 2. Մաշիա ի յուճոր, 3 հատորը, 3. Այդանով, 1-3 հատոր, 4. Է. Զոլա, 1-6 հատոր, 5. Է. Պո, 1-4 հատոր, 6. Ա. Ստ... ռաս 1, 2, 3, 4, 6, 7. Ա. Ռիդ, 1, 2, 3, 5, 6, 7, 8

[illegible]

digitised by A.R.A.R.@

Պատմական իրադարձությունների բերումով այնպես է ստացվել, որ Ալժիրը և Ֆրանսիան բավական սերտ հարաբերություններ ունեն, և դրանցից մեկի ճակատագրական անկայունությունը կարող է ազդել մյուսի վրա։ 1830 թվականից մինչև անկախության հռչակումը (1962 թ.) Ալժիրը եղել է Ֆրանսիայի գաղութը։ Եվ և անկախության հռչակումից հետո ալժիրաբնակ բազմաթիվ ֆրանսիացիներ հայրենիք վերադարձան, այժմ էլ այդ երկրում ապրում թյուններին) ցույց տվող ազգային աջակցությանը։ Այդ սպառնալիքների ու ճնշման պատճառն այն է, որ խոլամիստների սանձազերծած պարտիզանական պատերազմի պայմաններում Ալժիրի իշխանությունների հանդեպ Փարիզի համակրանքն աստիճանաբար փոխարինվում է խոհեմ ռազմական օժանդակությամբ։

Իրոք, արդեն մի քանի տարի է, ինչ Բրյուսելում գտնվող ՌՆՆ ճակատի օպանավորականներից կանխավոր բոլորներ են կատարում ալժիրյան օ- Մոհամմեդ Լամարին հրանոթների վաճառականների հետ հանդիպում են ռմբակոծվել հակաօդայինական կոփիկների զինատեսակներ պատվիրելու նպատակով։ Նոյեմբերի կեսերին ֆրանսիական «Էտուդ կալտեր» ընկերությունը հավաստեց, որ Ալժիրի ներքին գործերի նախարարությունը Ֆրանսիայից գնել է 9 «ճանապարհային ուղղաթիռ»։

Ֆրանսիայի իշխանությունները լրջորեն մտահոգված են Միջերկրական ծովի հարավում ծավալված արյունալի դեպքերի առնչությամբ։

ԱԼԺԻՐ

Արմատականների առաջին թիրախը Ֆրանսիան է

են տասնյակ հազարավոր ֆրանսիացիներ, իսկ Ֆրանսիայում ալժիրցիների թիվը ստույգ հայտնի չէ, կազմում է մոտ 1 միլիոն։ Այնպես որ Ալժիրի իրադարձությունները արդարացիորեն անհանգստանում են Ֆրանսիայի կառավարության վրա։ Ալժիրի անցյալ տարվա անհաջող ընտրություններից ի վեր պաշտոնական իշխանությունների և ընդդիմադիր արմատականների հարաբերությունները խիստ լարված են, արյունալի բախումների հետևանքով արդեն հազարավոր մարդիկ են զոհվել։ Իսկ վերջերս դեկտեմբերի 4-ին, արմատականները սպանեցին ալժիրյան «Մասին» բերդի տնօրեն Սանտ Միրբելին, որն Ալժիրում սպանված արդեն 24-րդ լրագրողն է։ Իսլամ արմատականների գլխավոր կազմակերպության՝ Փրկության իսլամական ճակատի ղեկավար Ալի Բելհաջը վերջերս նաև սպառնաց, որ 1995 թ. հունվարի 1-ից առաջական ահաբեկչական գործողություններ կձեռնարկվեն Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցչությունների դեմ։ Եվ և Ալի Բելհաջը ներկայումս գտնվում է տնային կալանքի տակ, անհնար է անտեսել նրա սպառնալիքն այդ խառնակ երկրում, որտեղ արմատականներն արդեն սպանել են 72 օտարերկրացիների, այդ թվում 22 ֆրանսիացիների։

Դեկտեմբերի 5-ին արտասահմանում Փրկության իսլամական ճակատի «խորհրդարանային պատվիրակության» ղեկավար Անուար Հադդամը իր հերթին ավելի հեռու գնաց, ԱՄՆ Բրյուսելի գաղթավայրի դեմ մեղադրանքներ ներկայացնելով, դիմակայելով Ֆրանսիայի կառավարության վրա ճնշում գործադրել, որպեսզի նա վերջ դնի «ալժիրյան խունտային» (արմատականներն այդպես են անվանում Ալժիրի օրինական իշխանու- դառնալեր, բռնելով դեպի Ալժիրի Բուֆարիկ քաղաքի ռազմական հենակետը։ Ըստ պաշտոնական հայ- Պաշտոնական չէ, որ Ալժիրին ցույց տվող անկախ օգնության քաղաքական աջակցության հեղինակը Ներքին գործ-

տարածության, դրանք փոխադրում են Մեծ Բրիտանիայում գնված հարբեր։ Բայց հանրահայտ է, սակայն, թե ինչպես այդ օդանավերը բեռնվում են զինվորական մեքենաներից լրացված սարքավորումներով, գրում է «Լը Պուեն» հանդեսը։ Ֆրանսիան Ալժիրի իշխանություններին մատակարարում է մասնավորապես ինֆրակարմիր ճառագայթներով գործող դիտարկման սարքավորումներ, որոնք կիրառվում են գիշերային մարտերի ժամանակ։ Ըստ նույն տեղեկությունների Ալժիրում գտնվող ռազմական հետախուզությունների կենտրոնը մասնագիտացած է այդ սարքավորումների արտադրության մեջ։ Ալժիրյան այդ ինքնաթիռներով բերված են նաև ֆրանսիական մասնագետներ։

Ամեն ինչ սկսվեց այս տարվա սեպտեմբերին, երբ Ֆրանսիա կատարած կարճատև այցի ընթացքում Ալժիրի բանակի շտաբի պետ, գեներալ նախարար Շառլ Պասկուան է։ Մինչդեռ Ֆրանսիայի արտգործնախարարությունում համոզված են, որ ալժիրյան «փակուղու» միակ ելքը իշխանությունների և չափավոր իսլամական արմատականների երկխոսությունն է ընտրությունների անցկացումը, ներքին գործերի նախարարը չի հավատում երկխոսությանը։ Նա արդեն բացահայտորեն աջակցում է Ալժիրի պաշտոնական իշխանություններին, որպեսզի դրանք չտապալվեն, և Ալժիրը հանկարծ չհայտնվի Իրանի նման վիճակում։ Մանավանդ որ դրա նախանշանները արդեն առկա են. վերջերս խուլիգանների խմբերից փախչելով, Օրանի գավառի բազմաթիվ գյուղացիներ ապաստան գտան Օրանում, դրանով էլ ավելի լարելով երկրի իրադրությունը։

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՉԻՃՅԱՆ

ԱՄՆ

Քրիստոֆեր. «Ռուսաստանի հետ մեր հարաբերությունները կրկին կայուն են»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ։ Երեկ ԱՄՆ պետքարտուղար Ուորըեն Քրիստոֆերը միանգամայն սխալ համարեց այն կարծիքը, թե վերջին ամիսներին ամերիկա-ռուսական հարաբերություններում տեղի է ունեցել «անդառնալի վատթարացում»։ «Կարծում եմ, արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւի հետ իմ հունվարյան հանդիպումը թույլ կտա լիովին կարգավորել առկա բոլոր խնդիրները», վստահեցնելով հայտարարեց նա Վաշինգտոնում կայացած մամլո ասուլիսում։

«Մենք նոր տարի ենք թեւակոխում այսուհետեւ էլ Ռուսաստանի բարեփոխումներին ու բարեփոխականներին աջակցելու, վիճելի հարցերը լուծելու եւ մեր շահերի զուգադիպման բազմաթիվ բնագավառներում առավելագույն արդյունքների հասնելու վճռականությամբ», ընդգծեց ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը։ Լրագրողների այն հարցին, թե ՆԱՏՕ-ի ընդլայնման ծրագրերի առթիվ Ռուսաստանի ղեկավարության խիստ ննճողատություննն արդյոք Վաշինգտոնի դիտավորությունների նկատմամբ Մոսկվայի հարաճուն կասկածամտության ականիայտ դրսեւորումը չէ, Ուորըեն Քրիստոֆերը պատասխանեց. «Հասկանալի է արդեն իսկ այն փաստը, որ Բրյուսելում եւ Բուդապեշտում այդ խնդիրների արծարծումից հետո մենք անհապաղ խորհրդակցություններ սկսեցինք դրանց շուրջը։ Ճաշ հարցեր հաջողվեց վերացնել ԱՄՆ փոխնախագահ Ալբերտ Գորի Մոսկվա կատարած այցի եւ նախագահ Բորիս Ելցինի ու վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինի հետ նրա հանդիպումների ընթացքում»։

«Այսօր մենք Գորի հետ քննարկեցինք իր ուղեւորության արդյունքները, որ բանակցերին հայտնեց ԱՄՆ պետքարտուղարը։ Մենք երկուսս էլ զգում ենք, որ Ռուսաստանի հետ մեր հարաբերությունները կրկին կայունացել են։ Կարծում եմ, որ շուտով թերեւս Անդրեյ Կոզիրեւի հետ իմ հանդիպման ժամանակ Ռուսաստանը փաստաթղթեր կստորագրի «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրին միանալու եւ ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերությունների սկզբունքների վերաբերյալ»։ Մենք ուզում ենք խուսափել ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցում որեւէ թյուրիմացությունից, նշեց Քրիստոֆերը։ 1995 թ. կննարկվեն միայն այդ գործընթացի հնարավոր ուղիները։ Մենք ամեն կերպ ընդգծում ենք, որ բացառիկ կարեւորություն ենք տալիս «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրին։ Դժվար է ասել, թե ինչու Կոզիրեւը եւ Ելցինը ՆԱՏՕ-ի որոշումներին արձագանքեցին հենց այդպես, եւ ոչ թե ուրիշ կերպ։ Թերեւս նրանց արձագանքը պայմանավորված էր մամուլի որոշ հաղորդումներով, որոնք խեղաթյուրել էին դաշինքի ընդլայնման հեռանկարի նկատմամբ մեր շատ զգուշավոր եւ տարբեր երբեմնզգեր հավելի առնող մոտեցումը»։

ՏԱՐԱԾՔ

Իրանը եւ Թուրքիան գործակցում են հակամարտությունների հարցում

ԹԵՀՐԱՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ։ Ինչպես երեկ հաղորդեց «Իրանի ձայն» ռադիոկայանը, Իսլամական կոնֆերանս կազմակերպության երկրների ղեկավարների հանդիպման շրջանակներում Իրանի պատվիրակության ղեկավար, արտգործնախարար Վելայաթին հանդիպում է ունեցել Թուրքիայի նախագահ Դեմիրելի հետ։ Նրանք երկխոսություն են վարել միջազգային եւ տարածաշրջանային մակարդակներով, սահմանային, ինչպես նաեւ բազմակողմ համագործակցության շուրջ։ Ներկայումս Իրանը եւ Թուրքիան ունեն լավ հարաբերություններ, որոնք մշտապես զարգանում են, նշեց ռադիոկայանը։ Երկու երկրները գործակցում են Անդրկովկասում եւ Բոսնիայում հակամարտությունների կարգավորման բնագավառում։

Իրանի ԱԳՆ-ն Չեչնիայի խնդրի խաղաղ լուծման կոչ արեց

ԹԵՀՐԱՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ։ Իրանի արտգործնախարարությունը մտահոգություն է հայտնել Չեչնիայի իրադարձությունների կապակցությամբ եւ հակամարտ կողմերին խնդրի խաղաղ լուծման կոչ արել։ «Իրանի ձայն» ռադիոկայանի երեկվա հաղորդման համաձայն, Իրանի ԱԳՆ խոսնակն ընդգծել է, որ այդ խնդրի ռազմական լուծումը ոչ միայն վիրավորում է մահմեդականների զգացմունքները, այլեւ Չեչնիայի հակամարտության լուծման սկզբունքային միջոց չի հանդիսանում։ Իրանը Ռուսաստանին կոչ է անում բոլոր միջոցները ձեռնարկել, որպեսզի Չեչնիայի հակամարտությունը լուծվի առանց ռազմական ուժի գործադրման եւ խաղաղ բնակիչների մահվան։

10 միլիարդ կեղծ դոլարներ

ԵՐԵՎԱՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ։ ԱՄՆ կառավարությունը ծայրաստիճան մտահոգված է համաշխարհային շուկան կեղծ 100 դոլլարանոցներով ողողված լինելու փաստով։ Այս մասին հաղորդում է «Թայմ» թերթը, վկայակոչելով ամերիկյան կոնգրեսական շրջանակները, ըստ որոնց անցյալում եւս կեղծ դոլլարներ տպագրման ու տարածման մեղքը բարդվում է Իրանի եւ Սիրիայի վրա։ Թերթը գրում է, որ միջազգային շուկան ողողած 100 դոլլարանոց թղթադրամներն տպագրված են գերարդիական հաստոցներով եւ բնավ չեն տարբերվում իսկական դոլլարներից։ Վերջին երեք տարիների ընթացքում կեղծ դոլլարների տպագրության ծավալը ավելացել է 8 անգամ։ Ամերիկյան կառավարությունն այս իրավիճակից ելք գտնելու մտահոգությամբ մտադիր է հաջորդ տարի տարբեր ձեւավորումներով նոր դոլլարներ տպագրել եւ դնել շրջանառության մեջ։

ԱՆԳԼԻԱ

«Ամեն ինչ լավ է, եթե նավթով է վերջանում»

Մինչ արեւմտյան Շոտլանդիայի եւ Իռլանդիայի ածխահանքային հարաբերությունների հարցը փոփոխության հայց խորհրդակցությունների առիթ էր տվել եւ այս տարվա հաշվարկներն երկրորդ կեսին ավելացավ մեկ բարեկամ գնացել պահպանողական Անգլիայի հեղինակությունը, մեկ ուրիշ լուր այժմ գալիս է նոյեմբեր ցնցող տպավորություն գործելու համայն աշխարհում։ Բախտն, ըստ երեւույթին, դարձյալ ժպտում է անգլիացիներին։ Ամերիկյան «Թայմ» եւ «Նյուզուիք» հանդեսների դեկտեմբերի 19-ի համարներում տպագրված հաղորդագրության համաձայն, նա ...բերվում է, որ սեւ ոսկու հսկայական պաշարներ կան 900 տարվա հնություն ունեցող Վինձորյան պալատի շրջակայքում։ Անգլիայի թագուհի Եղիսաբեթ II թագուհին իր համաձայնությունն է տվել

կանադական կոմպանիա Կանոն հետազոտ-

կան ընկերությանը հորատման աշխատանքներն սկսելու համար, բայց զգուշացրել է նա, «առանց խախտելու արքայական տեսարանը» եւ մեծ վնաս հասցնելու շրջակայքին։

Սպասվում է, որ ընկերությունը գյուղի տակերից 650 մետր հեռավորության վրա կսկսի իր աշխատանքները, որից հետազոտման ակնկալվում է մոտ 1,5 միլիարդ դոլլարի շահույթ։ Շահույթի մնացած մասը, անշուշտ, պետք է մտնի գործի արքայական գանձարանը։

Թագուհու որոշման տակ ու սար ստեպված է ընդունել Վինձորում արդեն ապրելակայաններ կողմից, ո... կարծիքով զբոսաշրջիկության դեպի այդ պատմական վայրը մեծանալու կարող է ստվել այնտեղ կատարվող աշխատանքների հետեւանքով։

ԱՆՎԱՆՈՒ

Պարսից ծոցի երկրների խորհրդակցություն

ՄԱՆԱՄԱ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ։ Երեկ այստեղ բացվեց Պարսից ծոցի արաբական երկրների ղեկավարների 15-րդ ամենամյա խորհրդակցությունը։ Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի անդամ վեց երկրների՝ Բահրեյնի, Կատարի, Քուվեյթի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Օմանի եւ Սաուդյան Արաբիայի ղեկավարների եռօրյա խորհրդակցության ընթացքում կքննարկվեն միջազգային եւ տարածաշրջանային մի շարք հարցեր։ Նրանց ննճության կանոնն միծանվորական լյան հաստության քանակցության ների ընթացքը, Իրանի կողմից Քուվեյթի ինքնիշխանության ճանաչումից հետո Պարսից ծոցի շրջանում ստեղծված կացությունը, Էմիրությունների պատկանող եւ 1991 թ. Իրանի գրաված երեք կղզիների հարցը եւ այլն։ Բացի տնտեսական համագործակցության զարգացումից, օրակարգում գլխավորներից մեկը կլինի խորհրդի անդամ երկրների կայունության անվտանգության ապահովումը եւ «թերակղզու վահան» համատեղ զորաբաժնի թվակազմը չորսից 25 հազարի հասցնելու հարցը։

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ **Մշակույթ**

-Ե՛ս գիտես ծնված եմ: Հոն անգլիական դպրոց եմ գացած: Վիեննա դաշնամուր, դիրիժորություն և կոմպոզիցիա ուսանած եմ...

Հայերեն փաստորեն ոչինչ չի սովորել, բայց խառնակցականը հասակ է: Պատմում է, որ Վիեննայում սուրբ տարի է ապրել, որտեղ դաշնակահար մասնակցել է Ժնևի միջազգային մրցույթին, ալդի ընկել: Հե- ասում է, կրկնում ընկ ոչ բն տաս տեղեր ուսանելով, այդ մեկ տեղ լավ ավարտելով:

Այդ լավ ավարտածի ինքնակիան հայ դիրիժորի ստեղծած ու դաստիարակած նվագախումբը դեռ հեռու կտանի: Մոնրեալի, Տորոնտոյի, Դետրոյթի Քոլամբուս Օհայոյի օրկեստրին քաղաքներում էլ նրա ղեկավարած 40-50 օրկեստրներ կհիշեն: Նույն Րաֆֆի Արմենյանն էր, որ Ալեքսանդր Մելիք-Փաշաևը, որ փառատոնականների դասանիշներից կտորն էր: Նմանությունը, սակայն, արտաքինով չվերջացավ, դիրիժորական հասակ սխեման և երգեցիկ ձեռքերն ավելի հեռուն տարան. ընտանեկան ճշմարիտ դիրիժորին Շումանի բավիցուրակի կոնցերտը կամ Մալերի «Առաջին սիմֆոնիան» ղեկավարելիս չեմ տեսել:

Թավջութակահար Սերգեյ Կա-

Ազգային ինքնագիտակցության ամենանշանակալի լիցքը

Դեկտեմբերի 18-ին Ֆիլհարմոնիկը հյուրընկալեց Րաֆֆի Արմենյանին

34 տարի առաջ Վիեննայի երաժշտական ակադեմիայում երանք մեծաքին կոմպոզիցիա են ուսումնասիրել և ճակատագրի բերումով արմեստ տեղափոխվել և մասնագետ երկու նշանավոր այր այլևս չեն հանդիպել: Նանցիկյանի դահլիճին վերադարձը նկարագրելու փոխարեն առաջարկում եմ նայել երբեմնի դասընկերների ժպտացող դեմքերին: Ողջախոհությամբ հյուրընկալ տանտեր է, Արմենյանը՝ դասընկերությունից տան դարձած եղբայր: Դասընկերություն, որ ամբողջ մի կյանք է՝ ապրած 52 տարին:

տո սրտել է ինձ նաև դասընկեր, այդ նոյասակով նույնիսկ Լոնդոնի Կայսերական ռադիոյում է սովորել, և երբ Հայկական մշակույթի տունը չիներ, գացին մասնագիտությունը խղեր նրան ար վեստից:

– Այնտեղ, ասում է, երջանկությունը հիմնեցի և սկսած հայկական ժողովրդական երգեր երգել: Անկա երաժշտի առաջին կարող էր հայկական հես և տաս տպագրված էի:

Սա փաստորեն ազգային ինքնագիտակցության դարձ սկիզբն էր, որ մինչ օրս անընդհատ շարունակվում է: Դաշնակահարը, կոմպոզիտոր ու դաշնակահարը, վերջապես հայակական Հանս Սվարովսկու դասընթացն անցած դիրիժորն այստեղ հաջորդում էին մեկը մյուսին: Ֆրանսիայի Բեզանսոնի մրցույթում հաղթելուց հետո, վերջինս բերեց հաջող առաջադրություն է դասավորել և 25 տարվա ընթացքում ժամանակը լցվել է նշանավոր մի շարք խոշոր պատմությունների:

Քանակիսնեցից համերգներ կապված է Կանադայի Քինգոն Ռոքեյու համալսի հես, որ Արմենյանի հիմնադրած և տնօրինած սիմֆոնիկ նվագախմբով երկրի սահմաններից դուրս էլ է հայտնի: Սա հատուկ երկացանկով ճիշտ համակազմ է, որին հայ դիրիժորն իր ամենասիրական ձայնագրումներն է վստահել, այդ թվում նաև հայ կոմպոզիտորների գործեր՝ Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի, Ալեքսանդր Հարությունյանի... Մեզ վաղուց հարազատ սովորական անուններ տարօրինակի հարմար տեղ գտել են: Ակնառվիս հերոսին նրան ուղեկցում են հյուրախաղերի ժամանակ: Չնայած բազմաթիվ էնտուզիազմ և անհոգ... միայն Կանադայում, Ամերիկա և եվրոպական շատ մի երկիր: Գործը

1982-ին Դետրոյթում իրականացրեց Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի անգլերեն բեմադրությունը: Հայաստանում երբեք չեղած ու չտարած հոգով ու մտքով նա զարմանալիորեն հայ է: Առաջին անգամ Հայաստան գալով էլ ազգային ինքնագիտակցության երկրորդ և ամենաառանձին լիցքն առավ: Հոգ չէ, որ բեմից մատուցածը, ավանդական «Հայր մերից» ու «Մեր հայրենիքից» բացի, հայկական չէր: Առանց հարցնելու էլ հասկացա, որ կարծես տա այս այցը նրան յուրօրինակ ինքնաստուգումն էր:

Իր համերգի նախօրյակին նրա հետ Երևանի Անտիկյան համալսարանի դասախոս Ասկեն Արմենյանի հետ հիացմունքով հոգևոր երաժշտության համերգն էր լսում, հետո խոսում էր վաղեմի բարեկամի՝ Լոխսի գեղեցիկ այս նախաձեռնության ու դրա իրագործման մասին, մի լիցք էլ այս ցեղ կուրսն էր, որ կրակվառարի մինչև զգաց: Գարնանը արդեն մի քանի համերգներով կգա, հայկական երաժշտությունն էլ կբերի, հատուկ եմ կծանոթանամ նաև կոմպոզիտոր Րաֆֆի Արմենյանի գործերին... Իսկ առայժմ ներկայացավ որպես դասական ստեղծագործությունների հոյակապ մեկնաբան, որն իր էության խորքում ապրած մի լիցք, կանգված սկզբունքների տեղն է: Բեմից ի վեր լարեց հիշողություններ և շատ երևան տարիս հեռավորությունից ինձ նման մեկ ուրիշ դեմք մոտեց

լսածով ինքնաբերաբար ընկալեցի որպես սա ժողովրդի հոգևոր վերածննդի հերթական խորհրդանիշը: Իմանալ, որ Ռոստրոպովիչի երբեմնի աշակերտն է, այսօր ճանաչված դրսեվոր Ասկենն Կայլյանցն բառն է և ոչ պակաս հայտնի դիրիժոր Յուրի Սիմոնովի որդին: Բոլորովին, հոր ղեկավարությամբ նա դիրիժորության էլ է հետևել և շատ այնտեղ, որտեղ հոր աշակերտ, մասնակցել է Վագների «Լոհենգրինի» բեմադրությանը: Ա. Կայլյանց դիրիժորի առաջնա խաղարկությունը չեմ կարող չհավասել, հանրի որ որտեղ երաժիշտ կատարող բանկորտակահար, դասակալներ փայլուն է և այնման ինքնաշտին, որ Շումանի կոնցերտի կատարման ընդունված նորմեր խախտել էր դարձյալ համոզիչ էր: Նման մենակատարին ընկերակցելը, ճիշտ է, բավականին դժվար է, և դեռևս արժանին հատուցենք մեր համար դեռ նորահայտ դիրիժոր Րաֆֆի Արմենյանի վարպետությանը: Հիմնականում հայտնագործում եմ հայկական գործ, ճիշտ է, չընկալվեց, բայց Գուստավ Մալերի մեծակերտ «Առաջին սիմֆոնիայի» բովանդակությունն ինձ ընկալեց որպես Հայաստանի, հայ մարդու անցյալ ու ներկա: Առաջին և երկրորդ մասերն ամենայն տառապանքների բովանդակությունն արտահայտություն են, երբ նույնիսկ բնության բարեհամբույրությունները ներկայացվում էին որպես չիրով կարգերի արժանիքներ, եռոտրի մեջ ներխուժել են անցյալի երջանկությանը, ամոթալի բարոյական սարքեր, իսկ ավարտը սրբազան և մոռացության պարզմանն է:

«Մարին դեռ լույս, ասում է մահաբուռ, ամենադժվար փորձ է, կզինակերտն մնացյալ դժվարություններն կհաղթի»:

ԱՐՓԻՆԵ ՂԼՈՒՋՅԱՆ

ԳՐԱԽՕՍ

Այսօրվա առասպելը այս դժվար մաքառումն է

Հրաչյա Թամրազյան. «Աղեղնավոր»

Հրատարակի վրա է բանաստեղծ, թարգմանիչ Հրաչյա Թամրազյանի բանաստեղծությունների նոր ժողովածուն, թվով հինգերորդը: Գիրքը տպագրել է «Նաիրի» հրատարակչությունը, հեղինակի ծախսերով:

Բանաստեղծի ոճին ծանոթ ընթերցողները այս գրքի էջերում կհանդիպեն նոր ընհանրացումների, կապված մեր ժողովրդի ներկայի բարդությունների և հոգեբանական անդրադարձների հետ:

Բանաստեղծին հաջողվել է սեփական հայացքով ու ամբողջական ընկալմամբ կամրջել անցյալն ու ապրվողը. հաջողվել է իրեն իր մեջ դնել այսօրվա զգայականի ու իրականի հարցականների արձագանքը, դա դարձնել «մենության ուժերում», ուր են «ձեռքեր, ձեռքեր, որ իմ մեջ են աճում, աչքեր, աչքեր, որ վառվում են ներսից»:

Գրքում ամփոփված բանաստեղծությունները ներկայացված են «Թմլկյաց երգեր» և «Պաշարված ամրոց» գլուխներում, սակայն խորհրդածությունների հենքով ամբողջական տրամաբանություն են ստեղծում, ժամանակից դարձնում ընթերցողին, մինչև իսկ իրարամերժ կարծիքների ու հայացքների տարբերության պայմաններում:

Առաջին հայացքից հեղինակի ներքնաշխարհի սեփական, անհատական ընկալումներն աստիճանաբար մեղմանում են ու դառնում ներքին ձայն, երկրի ու երկնքի միջև անցորդների անէացում ու հավաս, հավասի կոչ: Եվ երբ «հավերժ ինձ Արա արևն մեր հավիտյան առասպելն է», առա այսօրվա առասպելը

այս դժվար մաքառումն է, որից անբաժան է դարերից մեզ հասած արժանապատվությունը, արժանապատվության առասպելը:

Գիրքը խմբագրել է «Հայաստանի Հանրապետության» բերդի գլխավոր խմբագիր Այդին Մորիկյանը, որտեղ էլ, խմբագրայից, մինչ այդ լույս էին տեսել այս գրքի բանաստեղծական շարքերը: ԿԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

«Հայաստանի նոր պատմությունը օտարների աչքերով»

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել Արևելագիտության ինստիտուտի «Հայաստանի նոր պատմությունը արտասահմանյան արդի հեղինակների աշխատություններում»



կոլեկտիվ աշխատությունը՝ ռուսերեն լեզվով: Ինչպես նշվում է «Ներածության»-ում, Ա. Սալմասլյանի «Հայկական բիբլիոգրաֆիայից» հայտնի է, որ 17-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի 60-ական թթ. միայն եվրոպական 5 լեզուներով լույս են տեսել մոտ 7 հազար գիրք, հոդված և տարբեր հետազոտություններ՝ նվիրված Հայաստանին: Հեղինակները նպատակ են հետապնդում անցկացնել արտասահմանյան գիտնականների պատմագիտական աշխատությունների վերլուծություն՝ 1960-1980 թթ. Թուրքիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում և արաբական երկրներում հրատարակված աշխատությունների հիման վրա:

Գրքի Ներածությունը և առաջին 3 գլուխները գրել է պատմագիտության դոկտոր Ռուբեն Սահակյանը («Հայաստանի նոր պատմության լուսաբանումը թուրքական ժամանակակից պատմագիտության մեջ», «Հայաստանի նոր պատմությունը ֆրանսիացի հեղինակների աշխատություններում», «Անգլիացի պատմաբանների աշխատանքները»): 4-րդ գլուխը ներկայացրել է պատմագիտության թեկնածու Գայանե Մախմուրյանը («Հայաստանի նոր պատմությունը ԱՄՆ-ի ժամանակակից պատմագրության մեջ»): 5-րդ գլուխը հեղինակել է պատմագիտության դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանը («Արաբական պատմագրությունը Հայաստանի նոր պատմության մասին»): Պատմագիտության թեկնածու Աշոտ Մանուչարյանը գրել է «Հայերի ցեղասպանությունը գերմանացի հեղինակների լուսաբանմամբ» գլուխը:

Քննադատաբար վերլուծության են ենթարկվել հանգուցային հիմնական հարցերը:

ՅՈՒ. Ա.

ՎՈԼՏԵՐ-300

Վոլտերի պիեսը մինչև հիմա արգելված

Այս տարի արտասահմանում տեղի ունեցած հիշարժան մշակութային երևույթների թվին է պատկանում նաև այն, որ Վոլտերի ծննդյան 300-ամյակի տոնակատարության օրերին ժնևում արգելվել է բեմադրել նրա «Մոլեռանդություն կամ Մահմեդ մարգարեն» (1742) պիեսը: Ըստ «Լիբերասիոն» հանդեսի թղթակցի, դա ուղղակի հարված էր ուղղված Տոլերանտության ... ֆրանսիական ակադեմիայի անդամ, գրող և փիլիսոփա Մարի Ֆրանսուա Արուեի կամ թերևս այլ Ֆրանսիացի Վոլտերի դեմ, որն ամբողջ կյանքի ընթացքում պայքարել էր լուսավորության և ազատամտության համար: «Իհարկե կարող եմ չհամաձայնել ձեր կարծիքին, բայց մինչև կյանքիս վերջը կպաշտպանեմ այդ խոսքերն ասելու ձեր իրավունքը», սա է եղել նրա նշանավոր հռչակը: Ինչպես իր մյուս ողբերգությունների, այնպես էլ «Մահմեդ մարգարեի» նկատմամբ գրաքննադատների մոտեցումը խիստ տարբեր է եղել: Ոմանք այդ երկերը նվազ հաջողված են համարում, քան նրա փիլիսոփայական պատմվածքները, որոնք ընդգրկում են «Զադիգ կամ ճակատագիր» (1747), «Կանդիդ կամ լավատեսություն» (1759), «Պարզամիտը» (1767) և «Բաբելոնյան իշխանուհին» (1768) գործերը: Իսկ ուրիշները, որոնց թվում նաև բեմադրիչ Ժան Լուսեռնը, «Մահմեդը» համարում են լավ պիես, որն ուղղված է ոչ թե ընդդեմ իսլամի, այլ ընդհանրապես կրոնական մոլեռանդության դեմ: Այն առաջին անգամ ներկայացվել է Փարիզում, 1742 թվականին, բայց մի քանի օր անց կարդինալ ներկայացումներն ստիպված հանվել է Կոմեդի Ֆրանսեզի խաղացանկից: Ըստ երևույթին, մինչ «դատապարտված» է չբեմադրվելու, քանի որ այս անգամ էլ, երբ Լուսեռնը Վոլտերի այդ պիեսը բեմադրելու իր մտադրության մասին հայտնել է, ժնևում գործող իսլամական ասոցիացիայի մշակութային կենտրոնների ներկայացուցիչները, մեկը մյուսից առաջ անցնելով, քաղաքի իշխանություններին նամակներ են հղել, որոնցում Ալլահի հանդեպ անհարգանք են համարել դրա բեմադրությունը: Ռեժիսորը փորձել է պաշտպանել «մեղադրյալին»: Ճիշտ է, հետո այն, որ պիեսը հանել են 300-ամյակի միջոցառումների շարքից, բողոքելով հասարակության մտքերը, ընթերցումները և ... ընդունման ներկայումս, որը ներկա դեմքի ... ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմակերպություն... Հաստատել է, որ այս երկու անհաջողություններից ... Ֆրանսիական թերթերից մեկը:

Հ. Օ.

ՄՈՍԿՎԱ

Հայաստանը Գրիբոյեդովի հոբելյանին առանց Գրիբոյեդովի

ԵՐԵՎԱՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ. Հայաստանը պաշտոնական հրավեր է ստացել Մոսկվայում մասնակցելու հոբելյանական միջոցառումներին, որոնք նվիրված են ռուս հայտնի դիվանագետ և դրամատուրգ Ալեքսանդր Գրիբոյեդովի ծննդյան 200-ամյակին:

Հունվարի 13-16-ը Մոսկվայում կազմակերպվելիք թատերական փառատոնին և գիտագործնական խորհրդաժողովին կմասնակցի Հայաստանի պատվիրակությունը, որի կազմում են մշակույթի փոխնախարար Միքայել Աստվածատրյանը, Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանը, և Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ավագ գիտաշխատող Նելլի Օհանյանը:

«Ցավոք, տարբեր հանգամանքներ թույլ չեն տալիս Մոսկվա տանել «գրիբոյեդովյան» ներկայացում, ասաց ՀՀ մշակույթի նախարարության թատերական արվեստի վարչության պետ Քնարիկ Սարգսյանը: Մեզ համար դա կրկնակի ցավալի է, քանի որ Գրիբոյեդովի անունը սերտորեն կապված է Հայաստանի հետ: Բավական է վերհիշել, որ նրա «Խելքից պատուհասը» դրվեցին կայացել էր հենց Երևանում, բաց դռան հեղինակի ներկայությամբ»:

digitised by A.R.A.R.@

ՖԻՖԱ. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Զգալի տեղափոխություններ մեկ ամսում

«Ազգ» նախորդ համարում տպագրել էր ազգային հավաքականների ՖԻՖԱ-ի դասակարգումը նոյեմբեր ամսվա տվյալներով: Եվ ահա ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան ամփոփեց 1994 թ. մրցաշրջանը եւ հրապարակեց դասակարգման նոր ցուցակը:

Ընդամենը մեկ ամսվա ընթացքում զգալի տեղափոխություններ են կատարվել ազգային հավաքականների ընդհանուր դասավորման ցուցակում: Առաջվա պես այն գլխավորում է Բրազիլիայի հավաքականը, որն այս տարի 4-րդ անգամ նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը: Ավելորդ չէ նշել, որ անցյալ տարվա դասակարգմամբ Բրազիլիայի հավաքականը գրավում էր 3-րդ տեղը: Կտրուկ վերելք ապրեց Իսպանիայի հավաքականը, որը դեռեւս մեկ ամիս առաջ զբաղեցնում էր 5-րդ տեղը, սակայն շնորհիվ Եվրոպա-96-ի խմբային մրցաշարում, որտեղ ընդգրկված է նաեւ Հայաստանի հավաքականը, հաջող ելույթների, հիմա համաշխարհային դասակարգման ցուցակում զբաղեցնում է 2-րդ տեղը: Անցյալ տարի իսպանացիները 5-րդն էին: Հիշեցնենք, որ Եվրոպայի առաջնության ընտրական փուլի 2-րդ խմբի մրցաշարում իսպանացիները անցկացրած 4 հանդիպումներում նույնքան հաղթանակ են տարել: Ընդ որում այդ հանդիպումներից 3-ը անցկացրել են դրսում: ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում 3-րդ տեղը զբաղեցնում է Շվեդիայի հավաքականը, որը նոյեմբեր ամսվա դասակարգմամբ 2-րդն էր: Ֆուտբոլասերները գիտեն, որ Շվեդիայի հավաքականը հաջող հանդես եկավ ԱՄՆ-ի աշխարհի առաջնությունում եւ գրավեց մրցանակային 3-րդ տեղը: Անցյալ տարվա դասակարգմամբ Շվեդիայի հավաքականը 9-րդ տեղում էր: Կարճ ժամանակում կտրուկ նահանջ ապրեց աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր Իտալիայի հավաքականը, որը 2-րդ տեղից նահանջեց 4-րդ տեղ: Բայց ավելի մեծ նահանջ է ապրել աշխարհի եւ Եվրոպայի բազմակի չեմպիոն Գերմանիայի հավաքականը, որը 1993 թ. գլխավորում էր ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակը, իսկ հիմա 5-րդ տեղում է: Մրցաշրջանի արդյունքներով, ըստ հերթականության, առաջին տասնյակում են նաեւ Հոլանդիայի, Շվեյցարիայի, Նորվեգիայի, Իռլանդիայի եւ Արգենտինայի հավաքականները:

ՆՈՐ ՏԱՐԻ

Ձմեռ պապը ծովով է գալիս

ԳՐԻԳՈՐ ԱՌԻՔՅԱՆ

Վալանս, Ֆրանսիա. Ամեն տարի դեկտեմբերի 25-ին աշխարհի շատ երկրներում նշում են Քրիստոսի Սուրբ Ծնունդը: Դրանք կաթոլիկ քրիստոնյաներն են: Հայերը եւ ընդհանրապես ուղղափառ քրիստոնյաներն այդ տոնակատարությունը նշում են հունվարի 6-ին: Զարմանալի քրիստոնեություն: Փոքրուց մեր պատկերացումների մեջ Ձմեռ պապը ձյուների աշխարհից էր գալիս, իր հետ նվերներ բերելով երեխաներին: Հավանաբար դա նրանից է, որ մեր աշխարհամասում ձմռանը ձյուն է: Բայց Ավստրալիայում Ծննդյան տոներին ինչո՞ւ ձյուն գտնել, երբ տարվա այս ժամանակահատվածում այնտեղ ամառ է: Ավստրալացի Ձմեռ պապը գալիս է ծովով՝ սերֆինգով ջրերի վրա սահելով (սերֆինգն Ավստրալիայում ամենատարածված մարզաձեւերից մեկն է):

Ըստ ստորեւ տպագրված նկարից ստացած առաջին տպավորությունների, ավստրալիական Ձմեռ պապը մի քիչ ձիգ է երեւում, քանի որ իր բեռի տակ նվերներ չկան: Հավանաբար նա զբաղված է, կամ պարզապես Ձմեռ պապ է: Մինչդեռ Եվրոպայում եւ Հյուսիսային Ամերիկայում Ձմեռ պապերն իրենց սայլակները բեռնավորած խաղալիքներով եւ այլ նվերներով ճամփա են ընկնում Լապլանդիայից, Գրենլանդիայից եւ այլ տեղերից: Փոքրիկները նրանց սպասում են մեծ անհամբերությամբ, խոստացված խաղալիքներն ստանալու համար:

Թող Աստված հայկական Ձմեռ պապին տա ավելի մեծ ուժ, վառելանյութ (բենզին կամ սոլյարկա), որպեսզի նա բեռնավորված սայլակն իջնելով բիբլիական լեռներից չմնա սառած Երեւանի փողոցներում: Հայ մանուկը նույնպես արժանի է ուրախության: Աստված Պապա, խոսքը հենց է, մի հատ խաղալիք մեր փոքրիկներին:

ԽԾԱՆԿԱՐ

Հաղթեցին ռուսները

Մոսկվայում ավարտվեց սափողակով հոկեյի «Իզվեստիա» թերթի միջազգային ավանդական մրցաշարը: Առաջին տեղը գրավեց Ռուսաստանի հավաքականը, որը եզրափակիչում 1-0 հաշվով հաղթեց Չեխիայի թիմին: 3-րդ տեղի համար մրցավեճում Ֆինլանդիայի հավաքականը 2-1 հաշվով առավելության հասավ Շվեդիայի թիմի նկատմամբ: 5-րդ տեղը գրավեց Նորվեգիայի հավաքականը, որը 2-0 հաշվով հաղթեց Իտալիայի հավաքականին: Ֆրանսիացի հոկեյիստները 7-րդ տեղի համար պայքարում 5-3 հաշվով առավելության հասան Շվեյցարիայի հավաքականի նկատմամբ:

Ստոյիչկովը եւ Շեքսպիրը

Այն բանից հետո, երբ «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի հարցմամբ Բուլղարիայի հավաքականի եւ Իսպանիայի «Բարսելոնա» թիմի հարձակվող Խրիստո Ստոյիչկովը ճանաչվեց 1994 թ. Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ, Բուլղարիայի «Կոնտինենտ» շաբաթաթերթը ոգեւորված գրեց. «Խրիստո Ստոյիչկովից հետո նույնքան դժվար է դառնալ մեծ ֆուտբոլիստ, որքան Շեքսպիրից հետո՝ մեծ բանաստեղծ»: Ինչ խոսք, «Ոսկե գնդակը», որ տրվում է աշխարհամասի լավագույն ֆուտբոլիստին, եվրոպական ամենահեղինակավոր մրցանակն է, սակայն համեմատությունը չափից դուրս է:

Լոթար Մաթեուսին տուգանեցին

Գերմանիայի հավաքականի եւ Մյունխենի «Բավարիայի» ավագ Լոթար Մաթեուսին տուգանեցին 25 հազար մարկով եւ զրկեցին մեկ խաղով այն բանի համար, որ հեռուստատեսությամբ տված հարցազրույցում մեղադրել է Գերմանիայի միջազգային կարգի մրցավարներից մեկին կաշառք վերցնելու մեջ: Խոսքի ազատությունը մի բան է, իսկ սեփական տանը կարգուկանոն պահպանելը այլ բան:

ՍՓՅՈՒՌՔ

Վալանսի հայկական թիմի խոշոր հաշվով հաղթանակը

Ֆրանսիայի 2-րդ դիվիզիոնի առաջնությունում հանդես եկող Վալանսի հայկական թիմը 23-րդ տուրում հյուրընկալեց «Թուլուզին», որն անցյալ առաջնությունում հրաժեշտ տվեց առաջին դիվիզիոնին: Դաշտի տերերը վերելքով անցկացրին այդ հանդիպումը եւ հաղթեցին 4-1 հաշվով: Հայ երեք ֆուտբոլիստներից (Վենսան Յազմաջյան, Միշել Թերզյան, Արթուր Դեմիրճյան) խաղում էր միայն դարպասապահ Յազմաջյանը:

«Վալանսը» անցյալ մրցաշրջանի համեմատ հաջող է հանդես գալիս եւ, 23 խաղից հետո վաստակելով 30 միավոր, 22 թիմերի մրցաշարում զբաղեցնում է 12-րդ տեղը:

Իսկ մրցաշարային աղյուսակը միանձնյա գլխավորում է եվրոպական երկրների չեմպիոնների անցյալ տարվա գավաթակիր Մարսելի «Օլիմպիկը» հանրահայտ թիմը, որը 23 խաղից հետո ունի 45 միավոր: Նրան ընդամենը մեկ միավորով է զիջում «Ժենգամփ» թիմը:

Հիշեցնենք, որ «Վալանսիեն» թիմի հետ ունեցած սկանդալի պատճառով «Օլիմպիկը» զրկվել էր առաջին դիվիզիոնում հանդես գալու իրավունքից:

ԹԵՆԻՍ

Ստեֆան Էդբերգը հրաժարվեց մարզիչից

Շվեդ հանրահայտ թենիսիստ Ստեֆան Էդբերգը որոշել է հրաժարվել իր մարզիչ Տոնի Պիկարդից, որի գլխավորությամբ մարզվել է 11 տարի եւ հասել մեծ հաջողությունների պրոֆեսիոնալ թենիսում: 28-ամյա թենիսիստը, որն իր մարզական կյանքում շահել է 40 մրցաշար, հայտարարեց, որ, սովորության համաձայն, մրցաշրջանի ավարտից հետո մարզիչի հետ քննարկում էին առաջիկա ծրագրերը, եւ հենց հասկացավ, որ եկել է նրան հրաժեշտ տալու ժամանակը: Էդբերգն ընդգծեց, որ ուրիշ այլ մարզիչի մասին խոսք լինել չի կարող: Իսկ դա նշանակում է, որ այսուհետ նա մարզվելու է ինքնուրույն: Ինքը՝ Պիկարդը, անցյալում Անգլիայի հավաքականի խաղացողը, ընդգծեց, որ Էդբերգի հետ իրենք փառահեղ ճանապարհ են անցել թենիսում եւ ամբողջ կյանքում կմնան բարեկամներ:

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

«Հայկական աստղեր» մարզական ակումբի առաջին աստղերը

Ամենատարբեր մարզաձեւերի զարգացման գործում, բնական է, իրենց ներդրումն ունեն մարզիչները: Եւ երբ սանը որոշակի նվաճումներ է ունենում բարձր կարգի մրցաշարերում, ապա նրա հաջողություններն իրավացիորեն պատկանում են նաեւ մարզիչին: «Դինամո» մարզական ընկերության սեղանի թենիսի մարզիչ Ռաֆայել Հարությունյանի սաներից Լյուդմիլա եւ Նարինե Անտոնյանները դարձել են Եվրոպայի չեմպիոններ, նախկին Խորհրդային Միության առաջնությունների ու միջազգային տարբեր մրցաշարերի հաղթողներ են եղել Արամ Կոսյումջյանը, Էմմա Երիցյանը, Սիրանուշ Կիրակոսյանը, Արուսյակ Ղարիբյանը եւ ուրիշներ: Այսօր նրանց հետ չէ սիրված մարզիչը, եւ վաղամեռիկ Հարությունյանի գործը սաներն են շարունակում, դաստիարակում են սեղանի թենիսիստների մի նոր սերունդ: Այդ գործն ավելի բարձր հիմքերի վրա դնելու նպատակ էր հետապնդում «Հայկական աստղեր» նորաստեղծ պրոֆեսիոնալ մարզական ակումբը, որը նախաձեռնեց Ռաֆայել Հարությունյանին նվիրված անդրանիկ հուշամրցաշարի անցկացումը, հոգալով բոլոր ծախսերը: Պայքարի էին դուրս եկել հանրապետության չեմպիոններ ու մրցանակակիրներ Մարիաննա Սահակյանը, Ալլա Շախկոյանը, Բագրատ Եզմայլյանը, Վահրամ Միքայելյանը, ինչպես նաեւ մարզաձեւի վետերան, հանրապետության վաստակավոր մարզիչ, Եվրոպայի նախկին չեմպիոն Ֆելիքս Սարգսյանը: Մրցաշարին տղամարդիկ մասնակցում էին տարիքային երկու խմբով՝ մինչեւ 16 տարեկան եւ բարձր: Տղամարդկանցից եզրափակիչ դուրս եկան Բագրատ Եզմայլյանը եւ Ֆելիքս Սարգսյանը: Վերջինս խաղում էր երիտասարդական ավյունով: Առաջին 4 խաղափուլերում նրանցից յուրաքանչյուրը երկուական հաղթանակ տարավ: Վերջին՝ վճռորոշ փուլում նույնպես պայքարը լարված էր, եւ հնարավոր չէր գուշակել, թե ով կհաղթի, փորձը, թե երիտասարդությունը: Ի վերջո, 21:19 հաշվով 5-րդ խաղափուլը շահեց Եզմայլյանը, կրկին հաստատելով հանրապետության չեմպիոն լինելու իր իրավունքները: Երրորդ տեղը գրավեց Հայկ Մնացականյանը:

Կանանց մրցապայքարում դարձյալ հաղթանակ տարավ հանրապետության այս տարվա չեմպիոնուհին՝ Մարիաննա Սահակյանը, 3-0 հաշվով պարտության մատնելով Զեմֆիրա Վարդանյանին: Երրորդ տեղում է Ալլա Շախկոյանը: Պատանիների մրցույթում հաղթող դարձավ Արաբկիրի մարզադպրոցի սան Արտակ Հարությունյանը, որը 2-0 հաշվով հաղթեց Ռոբերտ Սարգսյանին (Շենգավիթի շրջան): Մրցումներում իրենց լավ դրսեւորեցին նաեւ Էջմիածնի մարզիկները, որոնք նվաճեցին պարգեւով հյուրի համար սահմանված մրցանակը: Հաղթողներն արժանացան դրամական պարգեւների: «Հայկական աստղեր» ակումբի կողմից կազմակերպված այս հուշամրցաշարն այսուհետեւ ավանդական կդառնա: Հուշամրցաշարին ներկա էին Հարությունյանի հարազատները, որոնք էլ հաղթողներին հանձնեցին պարգեւները:

Դ. Գ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի հավաքականի մրցակիցների ճամբարում

Իսպանիա

14-րդ տուր

«Էսպանյոլ»-«Կոմպոստելա»	2-0
«Ռասինգ»-«Ռեալ» Սար.	0-1
«Խիխոն»-«Ատլետիկո» Մ.	0-2
«Ատլետիկո» Բ.-«Վալենսիա»	2-1
«Դեպորտիվո»-«Սեվիլյա»	5-1
«Ալբասետե»-«Տեներիֆե»	2-1
«Սելտա Վիգո»-«Բարսելոնա»	2-4
«Լոգրոնյես»-«Ռեալ» Սոս.	0-4
«Բետիս»-«Վալյադոլիդ»	1-2
«Ռեալ» Մադրիդ-«Ռեալ» Օ.	2-0

1. «Ռեալ» Մադրիդ	21
2. «Դեպորտիվո»	21
3. «Ռեալ» Սարագոսա	21
4. «Բարսելոնա»	19
5. «Ատլետիկո» Բիլբաո	18
6. «Բետիս»	16
7. «Էսպանյոլ»	16
8. «Սեվիլյա»	15
9. «Կոմպոստելա»	14
10. «Սելտա Վիգո»	14
11. «Վալենսիա»	13
12. «Ատլետիկո» Մադրիդ	12
13. «Տեներիֆե»	12
14. «Ռեալ» Սոսիեդադ	11
15. «Ռեալ» Օվիեդո	11
16. «Ալբասետե»	11
17. «Խիխոն»	11
18. «Վալյադոլիդ»	10
19. «Ռասինգ»	9
20. «Լոգրոնյես»	5

Բելգիա

15-րդ տուր

«Լոմել»-«Բրյուգե ՍԱ»	0-0
«Լիրս»-«Լա Գանտուազ»	2-1
«Անտվերպեն»-«Մալինես»	2-0
«Բրյուգե ՖԱ»-«Սեն Տրոնդ»	4-1
«Բեւերեն»-«Ստանդարտ»	2-2
«Անդերլեխտ»-«Մոլենբեեկ»	2-0
«Սերենյ»-«Շառլրուա»	1-1
«Ալոստ»-«Օստենդե»	7-1

1. «Անդերլեխտ»	23
2. «Ստանդարտ»	22
3. «Բրյուգե» ՖԱ	21
4. «Լիրս»	20
5. «Սերենյ»	18
6. «Ալոստ»	16
7. «Անտվերպեն»	15
8. «Մալինես»	15
9. «Էկերեն»	14
10. «Բեւերեն»	14
11. «Լոմել»	13
12. «Լա Գանտուազ»	13
13. «Մոլենբեեկ»	13
14. «Բրյուգե» ՍԱ	12
15. «Սեն Տրոնդ»	12
16. «Շառլրուա»	12
17. «Օստենդե»	8
18. «Լիեժ»	7

Բաժինը վարում է ՍՄԲԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ՀԱՄԱՍԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

A STYLE

ORIGINAL DESIGN

ՕԳՏՎԵՔ ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ

Մեր հասցեն` Երեւան, Հանրապետության 47, Հեռախոս` 581841

Բացահայտված է հնչյունների իրական նշանակությունը

Բոլոր նրանց, ովքեր կուզենան

Հասու լինել մայրենի լեզվի հնչյունների իմաստակիր արժեքներին եւ նորովի տեսնել ծանոթ բառերի խունացած գույներն ու երանգները:

Ձեռք բերել բառերի ու անձնանունների իմացական գեղեցիկ խորհուրդը ճանաչելու բանալի:

Վերհիշեցնել սեփական ինքնագիտակցությունն ու վերազինվել հարազատ բառերի ահռելի հզորությամբ:

Տիրապետել լեզվաբանական, հոգեբանական, ազգագրական հետազոտությունների եւ կենդանի խոսքի մշակույթի նոր, արդյունավետ գործիքի:

Եւ հետայսու մայրենի լեզվով խոսքը ընկալել որպես տուն, որ միշտ մեզ հետ է իր հնչյունային հրավառությամբ:

Առաջարկում ենք ընթերցել

«Ամեն բանի հնչյունային մարմնացման մասին»

գրքույկս, որը վաճառվում է Երեւանի մի շարք գրախանութներում:

Հեղինակ` ԴԵՐԵՆԻԿ ՄԱՐԱՏԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հեռ. 25-68-41, 22-32-76

A STYLE 581841

ՓՆՏՐՈՒՄ ԵՄ

Մեկ սենյականոց բնակարան քաղաքի կենտրոնում կամ մերձակա «Բարեկամություն» եւ «Սասունցի Դավիթ» կայարանների շրջակայքում:

Զանգահարել` 58.18.41, 63.71.66

ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՄ

Կոմիտասի պողոտայում հինգ հարկանի շենքի չորրորդ հարկում գտնվող երեք սենյականոց բնակարանս երկու եւ մեկ սենյականոց բնակարանների հետ: Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել 25.01.59 հեռախոսահամարով:

ԿՈԲՐԱ

Ընկերությունը կազմակերպություններին, քաղաքացիներին եւ անհատ ձեռներեցներին առաջարկում է

· մազութ · յուղ ՄԳ-10 ·
· ատակի · սոլյարկա ·
· նավթ · բենզին ·

կանխիկ եւ փոխանցումային վճարմամբ:

- Վառելանյութը կմատակարարվի գնորդին վճարումից հետո 4-5 օրվա ընթացքում:
- Ընկերությունը կարող է կատարել վառելանյութի փոխադրում սեփական միջոցներով Երեւանից 50-70 կմ շառավղով, մեծ խմբաքանակների դեպքում:

Ընկերությունն առաջարկում է նաեւ տավարի միս:

Հասցեն` Բաղրամյան 30
Հեռախոսներ` 22-81-86, 22-32-79, 22-02-74:

A STYLE 581841

SARTARABAD

Company LTD

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՎ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԺԱՄԱՆՑԻ ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹՈՎ

ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ

7 օրով, 3 աստղանի հյուրանոց, սնունդ, օրական 2 անգամ
14 օրով, առանց հյուրանոց.

Մուտքի վիզաների եւ փաստաթղթերի ձեւակերպումը Մոսկվայում:

Հանրապետության հրապարակ, Նալբանդյան 20,
Տեղեկությունների համար զանգահարել 580632 հեռախոսով

A STYLE 581841

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Տիգրանի Աղամյանը, որ ծնվել է 1991 թ. մայիսի 13-ին, տառապում է ծանր հիվանդությամբ: Նրա բուժումը հնարավոր է միայն արտերկրում: Այդ նպատակով Հայխնայբանկի Երեւան քաղաքի Սպանդարյան բաժանմունքի N 164608 հաշվում, կոդ` 370101608, հաշվի համար` 600161001, բացվել է անձնական հաշիվ` 114686:

Փոքրիկ Աշոտի կյանքի փրկությամբ մտահոգված մարդիկ կարող են իրենց նպաստը բերել այդ բարեգործական գործին:

Ծննդյան տոների ամանորի գեղեցիկ հեքիաթային անակնկալներ.



ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ

A STYLE 581841

FULBRIGHT SCHOLAR PROGRAM



Aplications are now being accepted for the 1995/96 Fulbright Scholar Program. Candidates must possess A doctoral degree (or equivalent professional training and experience) and English proficiency sufficient to conduct research or to lecture in the United States.

CANDIDATES WILL BE CONSIDERED IN THE FOLLOWING FIELDS:

1. Political science, international relations, and law
2. Engineering (related to economics and the provosion of public Utilities)
3. American studies (history, literature, society or cultore of the United States)

Application forms may be obtained from the Usis office at the U. S. Embassy or the Irex office at the American University of Armenia. For further information or to submit applications, please contact the Usis office at 52.46.61. Application deadline is January 31, 1995

A STYLE 581841

«Հայրենիքի» հրատարակչության տպարան. Երեւան 23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1942. Տպաքանակ 5000. Ստորագրված է տպագրության 21. 12. 1994. Գինը 25 դրամ

digitised by A.R.A.R.@